ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

<<21>> ՆՈՅԵՄԲԵՐ 2016 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ավագանու յոթերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիտավան համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին:
2. Դիտավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը հաստատելու մասին:

Կողմ (5) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան	Վաղինակ	_____
Մանուչարյան	Ֆելիքս	_____
Բայրամյան	Միքայել	_____
Մարության	Կարեն	_____
Մանուչարյան	Սարիբեկ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Յակոբ Սարիբեկյան**

(Կ. Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 21-Ն

<<21>> ՆՈՅԵՄԲԵՐ 2016 ԹՎԱԿԱՆԻ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջների և "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել տեղական վճար.

1) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համատեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000/հազար/ դրամ:

2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողնից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար յուրաքանչյուր մասնակցի համար սահմանել 1000/հազար/ դրամ:

2. Սահմանել տեղական տուրք.

1) Համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և / կամ / ծխախոտի վաճառքի համար, հանրային սննդի օբյեկտում ոգելից խմիչքներ և / կամ / ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում

վաճառքի / իրացման / կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել 1600 / մեկ հազար վեց հարյուր / դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 5000 / հինգ/ հազար դրամ:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքի շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական / շինությունների / տեղադրման / թույլտվության համար տեղական տուրք սահմանել

3. Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

1) Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000/ երեք / հազար դրամ:

2) 20 և ավելի քառսակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 / հինգ / հազար դրամ:

Կողմ (5) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան Վաղինակ _____
Մանուչարյան Ֆելիքս _____
Բայրամյան Միքայել _____
Մարության Կարեն _____
Մանուչարյան Սարիբեկ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հակոբ Սարիբեկյան**

(Կ. Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Դիտավան համայնք, հասցե, հեռախոս, 094736198 էլ. փոստ ditavan.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 22-Ա

<<21>> ՆՈՅԵՄԲԵՐ 2016 ԹՎԱԿԱՆԻ

ԴԻՏԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՅՈՒՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Դիտավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը ըստ հավելված 1-ի:
2. ՈՒժը կորցրած ճանաչել Դիտավան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 9-ի <<Դիտավանի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրյուքաչափերը հաստատելու մասին>> N29-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (5) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Յարալյան	Վաղինակ	_____
Մանուչարյան	Ֆելիքս	_____
Բայրամյան	Միքայել	_____
Մարության	Կարեն	_____
Մանուչարյան	Սարիբեկ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հակոբ Սարիբեկյան

(Կ.Տ.)

Հավելված 1

Դիտավան գյուղական համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 21-ի N 22 - Ա որոշման

ԴԻՏԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	___% հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	135000		135000
	Համայնքային ծառայողներ				
2	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	87100		87100
3	Առաջատար մասնագետ 3.1-1	1	72752		72752
4	Առաջատար մասնագետ 3.1-2	1	72752		72752
	Տեխսպասարկման անձնակազմ				
5	Հարկահավաք	0.5	72752		36376
6	Հավաքարար	0.5	72752		36376
	ԸՆԴԱՄԵՆԸ	5	513108		440356

Աշխատակազմի քարտուղար _____ Ս. Ղազարյան

ստորագրություն անուն, ազգանուն